

ԱՌԱՇՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԴԱՍԱՎԱՆԴԵԼԻՍ

Հոգվածի նպատակն է՝ քննարկել առաձների և ասացվածքների դերը անգլերենը որպես օտար լեզու դասավանդելիս: Վերջին տարիներին գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացման պայմաններում ավելի ու ավելի շատ են խոսում օտար լեզուների դասավանդման ժամանակակից մեթոդների մշակման ու կիրառման մասին: Ինչպես հայտնի է՝ դասավանդման մեթոդները բազմազան են, սակայն հաճախ նրանցից որոշները ավելի արդյունավետ են դառնում, երբ զուգակցվում են հավելյալ մեթոդներով: Նկատենք, որ դասավանդման ճիշտ մեթոդի ընտրությունից է կախված ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ առաձներ, ասացվածքներ, ժողովրդական բանահյուսություն, մեղեդային հնչերանգ, քերականական կառույցներ, դիպուկ, թարգմանչական հմտություններ:

Օտար լեզուներից առավել մեծացել է պահանջարկը անգլերեն լեզվի նկատմամբ՝ կապված տնտեսական, դիվանագիտական, քաղաքական հարաբերությունների, միջմշակութային կապերի, գիտության և տեխնիկայի զարգացման հետ: Ուրեմն՝ անգլերեն լեզու դասավանդողներն առավել պատասխանատվությամբ պետք է մոտենան խնդրին՝ ընտրելով դասավանդման առավել ճիշտ, արդյունավետ և հասանելի մեթոդներ սովորողների համար: Այս առումով որոշ մասնագետներ կարևոր են համարում ուսումնական պրոցեսում առաձների և ասացվածքների օգտագործումը: Այստեղ տեղին է նշել, որ վերջիններիս կիրառումը հավելյալ մի միջոց է՝ ուսումնական գործընթացն ավելի հետաքրքիր

և արդյունավետ դարձնելու համար:

Ցավոք սրտի, անգլերեն լեզվի և, առհասարակ, օտար լեզուների դասագրքերում շատ քիչ տեղ է հատկացվում առաձների կամ ասացվածքների ուսումնասիրմանը և, չգիտես ինչու, ուսումնական ծրագրերը կազմելիս նրանք գրեթե անտեսվում են: Մինչդեռ քչերին է հայտնի նրանց օգտագործման արդյունավետությունը: Առաձներն ու ասացվածքները, իմաստային տեսակետից լինելով դիպուկ և հաճախ՝ մեղեդային հնչեղությամբ, ավելի դյուրին են մտապահվում սովորողների կողմից. մի հանգամանք, որը նպաստում է ոչ միայն բառապաշարի հարստացմանը, այլև խոսքը դարձնում ավելի դիպուկ և հասկանալի:

Առաձներն ու ասացվածքները կազ-

մում են ժողովրդական բանահյուսության կարևոր բաղկացուցիչ մասը, որոնք իրենց մեջ ներառում են տվյալ ժողովրդի մշակույթը, պատմությունը, իմաստությունն ու փորձը՝ կուտակված իրենց գոյության ողջ պատմության և զարգացման ընթացքում: Մասնագետների հավաստմամբ, որոնք գործնականում կիրառում են առաձեռն ու ասացվածքներ անգլերեն դասավանդելիս, դասերը դառնում են առավել արդյունավետ և հետաքրքիր, քանի որ սովորողները ծանոթանում են իրենց համար մինչ այդ անծանոթ մշակութային, պատմությանը և ժողովրդական իմաստությանը: Այս հանգամանքը կարող է խթան հանդիսանալ սովորողների մոտ՝ ավելի խորը և հանգամանալից ուսումնասիրելու օտար լեզուն, իսկ մեր դեպքում՝ անգլերենը:

Առաձեռնն ու ասացվածքները կարելի է օգտագործել ուսուցման տարբեր փուլերում և տարիքային խմբերում (սկսնակներ, միջին և բարձր մակարդակներ): Սակայն այս դեպքում շատ կարևոր է նրանց ընտրության հարցը՝ ելնելով դասավանդման խնդիրներից ու նպատակներից: Նկատենք, որ առաձեռների և ասացվածքների կիրառումը դասի ընթացքում լուծում է մի շարք կարևոր խնդիրներ՝

➤ **Ուսուցողական** – սովորողների մոտ կատարելագործվում են արտասանական հմտությունները, ընդլայնվում է բառապաշարը, նպաստում թարգմանչական հմտությունների ձեռք բերմանը, ամրապնդվում են քերականական գիտելիքները:

➤ **Զարգացնող** – ընդլայնվում է մտահորիզոնը, կատարելագործվում են սեփական մտքերն արտահայտելու

ունակությունները, ակտիվանում տրամաբանելու կարողությունը:

➤ **Դաստիարակչական** – սովորողները ձեռք են բերում բարոյա-կամային հատկանիշներ, այդ թվում՝ հանդուրժողականություն այլ մշակույթների, ժողովուրդների, սովորույթների նկատմամբ:

➤ **Խթանող** – մեծանում է սովորողների մոտ հետաքրքրությունը տվյալ լեզվի և տվյալ լեզուն կրող ժողովրդի նկատմամբ և այլն:

Ինչպես արդեն վերը նշվեց, առաձեռնն ու ասացվածքներն օգնում են ընդլայնելու բառապաշարը և քանի որ նրանք հաճախ լինում են կարճ, հանգավորված և մեղեդային հնչերանգով, ուստի բառապաշարն էլ ընկալվում և մտապահվում է հեշտությամբ: Սա առավել ակնհայտ է սկսնակների մոտ: Եթե մեր նպատակն է սովորողների մոտ ամրապնդել տվյալ առաձը կամ ասացվածքը կազմող բառերի խումբը, ապա այս մեթոդը ճիշտ տեղին է: Օրինակ՝

1. A friend in need is a friend indeed.

2. Live and learn.

3. A man proposes and God disposes.

4. Horses for courses.

5. Safe bind, safe find.

Շատ հաճախ որոշ սովորողներ ունենում են արտասանական դժվարություններ: Սա հատկապես բնորոշ է ուսուցման սկզբնական փուլին: Ենթադրենք խնդիրը վերաբերում է անգլերենի [t] և [r] հնչյունների արտասանությանը: Այս դեպքում նպատակահարմար է հետևյալ ասացվածքի կիրառումը՝

Don't trouble trouble till trouble troubles you.

Մեկ ուրիշ դեպքում [θ] և [ð] հնչյունների արտասանությունը կատարելագործելու համար նպատակահարմար է օգտագործել հետևյալ օրինակները՝

Nothing seek, nothing find.

Wealth is nothing without health.

It takes a thief to catch a thief և այլն:

Եթե դասավանդողը ճիշտ ընտրի առաձներն ու ասացվածքները, ապա սովորողների մոտ կարելի է կատարելագործել ոչ միայն արտասանական, այլև քերականական համակարգը: Օրինակ՝ անգլերենի ստացական հոլովի /**Possessive Case**/ ամրապնդման համար, որպես հավելյալ միջոց, կարելի է առաջարկել հետևյալ առաձները կամ ասացվածքները՝

Caesar's wife must be above suspicion.

Everybody's business is nobody's business.

An Englishman's home is his castle.

Ածականների համեմատության աստիճանների դեպքում տեղին է հետևյալ օրինակների գործածումը՝

He laughs best, who laughs last.

Better late than never, but better never late.

East or West, home is best.

False friends are worse than open enemies.

Where the river is deepest, it makes least noise.

Laughter is the best medicine.

Actions speak louder than words.

Four eyes see more than two.

The highest tree has the greatest fall.

The best fish swims in the bottom.

The eye is bigger than the belly.

The least said the soonest mended.

The nearer the bone, the sweeter the flesh.

Անգլերենի մոդալ բայերի ուսուցման կամ ամրապնդման ժամանակ կրկին կարելի է դիմել առաձների կամ ասացվածքների օգնությանը՝

Good can never grow out of evil.

You can take a horse to the water, but you cannot make him drink.

The leopard cannot change his spots.

No man can serve two masters.

You cannot make a silk purse out of a sow's ear.

Every tub must stand on its bottom.

What can't be cured must be endured.

The wolf may change his coat, but not his disposition.

The wolf may lose his teeth, but never his nature.

You have made your bed and you must lie on it.

The cobbler should stick to his last.

Առաձների ու ասացվածքների քերականական կառուցվածքը հնարավորություն է տալիս դասավանդողներին օգտագործել նրանց նաև անգլերենի քերականական ժամանակաձեւերն ամրապնդելիս: Օրինակ, ապառնի անորոշ ժամանակաձեւի համար

(Future Indefinite Tense) նպատակահարմար են գործածել հետևյալ օրինակները՝

If the sky falls, we shall catch larks.

If you run after two hares you will catch none.

If you agree to carry the calf, they will make you carry the cow.

Take care of the pence and the pounds will take care of themselves.

When the cat is away, the mice will play.

Who keeps company with the wolf will learn to howl.

Մեկ այլ դեպքում առաձններն ու ասացվածքները կարելի է օգտագործել անգլերենի կրավորական սեռը (Passive Voice) և դրա հետ կապված՝ անկանոն բայերն ուսումնասիրելիս՝

What is done can't be undone.

One link broken, the whole chain is broken.

If one claw is caught, the bird is lost.

Nothing is given so freely as advice.

One link broken, the whole chain is broken.

Իսկ հետևյալ օրինակներն էլ արտացոլում են անգլերենի հրամայական եղանակը՝

Never put off till tomorrow what you can do today.

Never say never.

Live and learn.

Promise little, but do much.

Հաճախ առաձններն ու ասացվածքներն ավելի լավ են մտապահվում, եթե մենք գտնում ենք նրանց համարժեքները մայրենի լեզվում: Օրինակ՝

Better late than never (անգլ.) – Լավ է ուշ, քան՝ երբեք (հայ.).

An apple a day keeps the doctor away (անգլ.) – Օրական մեկ խնձոր՝ հեռու կմնաս բժշկից (հայ.).

Cut your clothes according to your clothes (անգլ.) – Ոտքերդ վերմակիդ չափով մեկնիր (հայ.).

Եթե մեր նպատակն է սովորողների մոտ թարգմանչական հմտությունները զարգացնելը, ապա ավելի հարմար է ընտրել այնպիսի առաձներ կամ ասացվածքներ, որոնց համարժեքը դժվար է գտնել մայրենի լեզվում: Այս դեպքում սովորողը ինքը պետք է հանդես բերի ինքնուրույնություն. նախ բառարանի օգնությամբ թարգմանի առանձին բառերի իմաստը, իսկ հետո փորձի մայրենի լեզվով (տվյալ դեպքում՝ հայերենով) տալ նրանց տրամաբանական իմաստը: Փաստորեն, մի կողմից մենք զարգացնում ենք թարգմանչական հմտությունները, իսկ մյուս կողմից էլ՝ տրամաբանությունը: Նման մոտեցումը խիստ արդյունավետ է, որովհետև սովորողների մոտ առաջանում է հետաքրքրություն և շահագրգռվածություն օտար լեզուն սովորելու նկատմամբ: Բացի դրանից՝ կոտրվում է դասի միապաղաղությունը և մտցվում թարմություն:

Վերը նշված օրինակները վկայում են առաձների և ասացվածքների կիրառման լայն շրջանակների ու հնարավորությունների մասին անգլերեն լեզուն որպես օտար լեզու ուսումնա-

սիրելիս: Նրանց կիրառումը ոչ միայն նպաստում է բանավոր խոսքի և լեզվական մտածողության զարգացմանը, հարստացնում բառապաշարը, ամրապնդում հիշողությունը, այլև օգնում քերականական ժամանակաձևերի ու կառուցվածքների ամրապնդմանը: Մյուս կողմից էլ սովորողների մոտ զարգանում են ինքնուրույն մտածելու ունակությունները, թարգմանչական հմտությունները, խոսքը դարձնում ավելի տեղին, գեղեցիկ ու հետաքրքիր: Առաձների և ասացվածքների կիրառումը նաև սովորողներին հաղորդակից է դարձնում ոչ միայն սեփական, այլև այլ ժողովուրդների մշակույթներին, ժողովրդական բանահյուսությանը, պատմական անցյալին, կենցաղին, ապրելակերպին և այլն:

Ինչ խոսք, առաձների ու ասացվածքների դերի մասին կարելի է խոսել անվերջ: Ինչպես մենք արդեն տեսանք, նրանց կիրառման հնարավորությունները անգլերեն լեզու դասավանդելիս բավական մեծ են: Ցավոք, ներկա դարաշրջանում գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացման պայմաններում քչերն են այսօր անդրադառնում նրանց կիրառման լայն հնարավորություններին օտար լեզու (հատկապես՝ անգլերեն լեզու) դասավանդելիս: Ցանկալի կլիներ, որ անգլերեն լեզվի դասաժամերին ավելի հաճախ օգտագործվեին առաձերն ու ասացվածքները, որոնք ոչ միայն օգնում են մտապահելու նոր բառերը և ամրապնդելու քերականական ժամանակաձևերն ու կառույցները, այլև նրանք ունեն նաև դաստիարակչական նշանակություն՝ նպաստելով սովորողի աշխարհընկալման զարգացմանը:

Գրականություն

1. Англо-русский фразеологический словарь.-А.В. Кунин, Москва, 1967
2. Использование пословиц и поговорок на уроках иностранного языка.-համացանց
3. Longman Dictionary of English Idioms.-Longman Group UK Limited, 1987.
4. «Роль пословиц и поговорок при обучении грамматике английского языка».-Бостаева В. Л. /համացանց/.
5. Словарь употребительных английских пословиц.-Москва, «Русский язык», 1985.
6. http://www.rusnauka.com/7_NITSB_2013/Philologia/1_130648.doc.htm

РОЛЬ ПОСЛОВИЦ И ПОГОВОРОВ В ПРЕПОДАВАНИИ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА КАК ИНОСТРАННОГО

АСМИК АБРАМЯН

Преподаватель английского языка
НАН РА, Международный научно-образовательный центр

Цель этой статьи – обсудить роль пословиц и поговорок в преподавании английского языка как иностранного. Их использование не только обогащает нашу речь, но также помогает укрепить

употребление грамматических времен глагола и грамматические конструкции английского языка, способствуя расширению словарного запаса и мировоззрения.

THE ROLE OF PROVERBS AND SAYINGS IN TEACHING ENGLISH AS A FOREIGN LANGUAGE

HASMIK ABRAHAMYAN

The International Scientific Educational Center
of the National Academy of Sciences of the RA

The article deals with English proverbs and sayings in teaching English as a foreign language. Their application not only enriches our speech, but also helps to strengthen the application of

English verb tenses and grammatical constructions, contributing to the enlargement of the English vocabulary and world outlook.